

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعہ علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՂԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 31

1898 ՀՈԿՏԵՄԲԵՐ 3

Ամեն տեղի համար Տարեկան կանխիկ 50 դահեկան, Վեցամսեայ 26 իսկ եռամսեայ, 13 դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթատարի ծախքը համագրութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բոլ ալ կ'ընդունուի 100 դրուէի տեղ 105 դրուէ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

Ղ. ԲՈՂԱՏ. — Հանրագիտակի բաժինը Հայ Տիկնոջ եւ Օրիորդին համար:

Կ. Պ. Ք. — Օտար կրթութիւն:

Ա. ԽԱՆՃԵԱՆ. — Առողջապահական նօթեր. — Մեր հազուատները:

Մ. Կ. ՄԱԼԱՅԵԱՆ. — Երկրագործութիւն տեսական եւ գործնական:

Ղ. ԲՈՂԱՏ. — Ճարտարարուեստական. — Թէ ինչպէս կերակրեղէնները տուփերու մէջ կը պահեն:

ՋԱՐԵՀ ՆԵՄՅԷ. — Մանկավարժական. — Մանկավարժութեան ծագումն ու նպատակը:

Ղ. ԲՈՂԱՏ. — Պարտիզպանական. — Վարդետունկի ասպարուտը:

Ղ. ԲՈՂԱՏ. — Գետնախնձորի մշակութիւնը:

ԱՐԱՔՍ. — Առտնին տնտեսական. — Սերկելիլը:

Տ. ՊՕԶԱՃԵԱՆ. — Գիտական ինդիւրներ:

Ազգային, Ներքին եւ Քաղաքական Լուրեր:

Թղթակցութիւնք, Հանելուկ, Ազդեւն:

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ. ԳԱՅՍԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ - Ալի հատակէի, Թիւ 4

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԿԱՐԻՆ. — Ե. Տր. Աղարեան էֆ. — Ստացած ենք նամակնիդ. մոտ ուղարակցես պատասխան և ընկալազիր կ'ստանաք. որակառնելը զրկեցինք:

ՄԱՆԻՍԱ. — Մ. Երկանեան էֆ. — Ստացանք նամակնիդ. կը պատասխանենք: Ձեր ցուցուցած նոր բաժանորդը արձանագրեցինք, թերթերը կը զրկենք: Նմոյշ մը զրկեցէք Ձեր նիւթէն, օգտակար է, կը հրատարակենք:

ԱՅԻՕՆ-ԳԱՐՍ-ՀԻՍԱՐ. — Ա. Հալէսլեան էֆ. — Ստացանք նամակնիդ. շնորհակալութիւն, կը զրկենք:

ՄԱՆԻՍԱ. — Օր. Ե. Սաղաթիւլ. — Ստացանք նամակնիդ. շնորհակալութիւն, կ'ստանաք թերթերը:

ԿԷԼԻՊՈԼԻ. — Գ. Վ. էֆ. — Նամակնիդ ստացած ենք. կը ջանանք հարկ եղածն կարգադրել, և եզրակացութիւնը իմացնել Ձեզ. Վ. Յ. Տ. Յովսէփեան էֆ. ի պատասխանին կ'սպասենք:

ՊԱՐՏԻՋԱԿ. — Ս. Մակարեան էֆ. — Գէթ հաճեցէք մեր նախորդ Գործակալ էֆ. ի խօսիլ, եթէ գիւրութիւն ունիք. որպէս զի երկտողի մը պատասխանէ մեզ, և թէ չուզեր անհաճոյ եզրակացութեան մը յանգեցընել գործը:

ՄԱՄՈՒՐԷԹ-ԻԻԼ-ԱՂԻՂ. — Խ. Քէչիլեան էֆ. — Ստացած ենք նամակնիդ, ընդ որա և պարունակութիւնը. թերթիս նկատմամբ եղած առարկութիւնները արդարացի չեն. մասնաւոր նամակ կը գրենք Թաշեան էֆ. ի. ստացած ենք նաեւ Յ. Պ. Ա. էֆ. ի գրութիւնը. փախաբեղի էր որ իր անունը մեր տոմարին մէջ արձանագրուած տեսնէինք. յիշեցէք Բրիտտոսի առակը, և յարմարեցէք ստակէս. թերթ մը միայն խօսքով չի կշտանար, այլ և դրամով. եթէ մեր բաժանորդները զմեզ գոհացնեն, մենք ալ կը ջանանք հետզհետէ թերթիս պարունակութիւնը աւելի շահեկան և ճշիւ ընել: Լուծումները պէտք է զրկել:

ՌՈՒՍՃՈՒԲ. — Լեւոն էֆ. Սարգսիեան. — Ստացած ենք նամակնիդ և պարունակութիւնը. շնորհակալ ենք. պակասները չորհրդէնք:

ՄԱՆԻՍԱ. — Տր. Յ. Սանտաղճեան. — Ստացանք գրութիւննիդ. շնորհակալութիւն Ձեր համակրութեան:

Ձ Թ Օ Ս Ա Ն Ք

ՀԱՆՆԼՈՒԿ ԹԻԻ 21

Բառ մըն եմ ևս երկու վանկով
Կազմուած եմ վեց զրերով
Պիտի զխառ թէ ի՞նչ կերպով
Կրնաս բաժնել վանկերս շուտով:
Առաջին վանկս երբ սրբօրէս
Եռասուս բառն անշուշտ գտնես
Ամէն տեղ դու թերեւս տեսնես
Ինչ որ հիմա գտնել կ'ուզես:
Երկրորդ վանկիս համար կ'ըսեն
Թէ ամէն տեղ գուցէ պէտք են
Մանաւանդ երբ մարդիկ ուզեն
Շինել բան մը ոչ-քարալէն:
Երկրորդ վանկիս երբ միանան
Անմիջապէս քով քովի դան
Ընթերցողներն պիտի գտնան
Տէրունարան մի հրաման:
Պէշեկթաշ 3. Պ. 2.

ՀԱՆՆԼՈՒԿ ԹԻԻ 17

ՀԱՆՆԼՈՒԿ

Ձոր լուծած են.

Օրբ. Պ. Պ. Պ. Պոլիսէն. — Ձապէլ Եազճեան, Այոլնէն և Նեկտար Ա. Դերձակեան, Կարինէն:

Տեարբ Յ. Շէլէֆեան և Յակոբ Արայճեան: Ոտանաւոր լուծում չիկայ:

Թիւ 16 հանկուկի լուծումը անցեալ շաբթու սխալմամբ չէր դրուած, որ հետեւեալն է.

ՄԱՐԴ-ԴՐԱՄ-ԱՐԴ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՐԱՌԳՐԱԳԵՏ - ՏԵՕՐԷՆ

Դ. ԲՈՒՍԵ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 31

1898 ՇՈԿՏԵՄԲԵՐ 3

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԲԱԺԻՆԸ

ՀԱՅ ՏՐԿԱՆՁ ԵՒ ՕՐԻՈՐԳԻՆ ՀԱՄԱՐ

Թերթիս համակիր Հայ Տիկիներու
և Օրիորդներու խումբ մը փափաքելով
կանացի վայելչազարդութեան Հայե-
րէն թերթ մ'ունենալ, դիմած են խմբ-
բազումութեան, և իրենց այդ փափաքը
իրագործուած տեսնել կ'ուզեն «Հանրա-
գիտակ»ի մէջ:

«Հանրագիտակ»-ը ոչ մէկ խոչնդո-
տի առջեւ կանգ չ'առնելով, կը յառաջ-
դիմէ աննկուն կամքով մը, նպատակ ու-
նենալով միշտ ժողովուրդին օգտակար
հանդիսանալ, բարձրացնել անոր մտտե-
սական վիճակը, գործնական հրահանգ-
ներով: Եւ այս անգամ երբ այսպիսի օգ-
տակար առաջարկութիւն մը կ'ըլլայ մեզ,
առանց մերժողական պատասխան մը տա-
լու, մենք եւս կը փափաքինք մեր կող-
մէ հաճոյակատարութեամբ համակեր-
պիլ, Հայ կանանց այնչափ օգտակար,
մեր Առանին Տնտեսականներու ճիւղին

վրայ աւելցնելով Ձեռագիրութեան, և
կանացի ամէն տեսակ ձեռարուեստներու
մասնաճիւղեր:

Մեր այս ձեռնարկով սակայն, նպա-
տակ չը պիտի ունենանք, Հայ բնաւանիք-
ներու մէջ նորածնութեան հետեւեւելու
կործանարար դաղափարը արծարծելու,
այլ աւելի պիտի ջանանք իդական սեռի
վայելչասիրական ճոշակի մակարդակը
բարձրացնելով հանդերձ, զգուշացնել
զիրենք կարգ մը բաղմոժախ և շռայլ
միջոցներէ, ստիպեցնելով իրենց գործնա-
կան եղանակներ, որպէս զի՝ կարող ըլ-
լան իրենք՝ իրենց ձեռքերով իսկ պատ-
րաստել ըստ կարի խնայողարար, ամէն
տեսակ շնորհածեւ արդուզարդեր, ու-
ռանց իրենց սնական ծախքերու պիւտ-
ճէին վրայ մեծամեծ ծախքեր աւելցնե-
լու:

Մեր այս ճիւղը հետեւաբար, խոր-
հրդատու վարդեա մը պիտի ըլլայ, սող-
նէ գործութեամբ իրենց ապրուստը ճարող
արհեստարուհիներու, ամէն դասակար-

դի ընտանեաց խնայագէտ մայրերու, օրիորդներու, ինչպէս և Ձեւագէտ վարժուհիներու, կանացի հազուադէպ պատրաստող կարող մասնագէտներու, եւն։

Մեր այս նպատակը իրագործելու համար, անշուշտ Եւրոպական թերթի մը տալիս շնորհութեան հարկեցուցիչ պէտքն պիտի ունենանք. դուռն ենք արդէն, որ Ֆրանսական ԼԱ ՍԷՉՈՆ անուն կանանց պատկերազարդ թերթն է, հանրածանօթ իր ճոխութիւնով, լրջութիւնով, գործնական եղանակներով, պատկերներու հրապուրիչ փայլով, և ձեւերու համոզիչ ճշգրտութիւնով։ Աշխարհի մէջ ամենէն աւելի տարածուած վայելչազարդութեան թերթն է, որ մէկ միլիոն օրինակէ աւելի կը հրատարակուի։ Իւր արտօնատիրոջ հետ մասնաւոր պայմաններու տակ համաձայնելով, պիտի Հայաստանէնք զայն, և այս կերպով պիտի նուիրենք Հայ իգական սեռին, հայերէն վայելչազարդութեան թերթ մը, որ ամէն կերպով կատարելապէս դոհացու՞մ պիտի տայ անոր փափաքանաց։ Լա Սէզօնի ամբողջ պարունակութիւնը պիտի գտնեն «Հանրագիտակ»ի մէջ, ուս զերազանց տարբերութիւնով որ, նոյնատիպ պատկերներուն քովի բացատրութիւնները Հայերէն պարզ ժողովրդական և ամենուն համար դիւրահասկանալի լեզուով պիտի ըլլան։ Լա Սէզօնին պէս փոխանակ 15 օրը անգամ մը հրատարակուելու, ամէն շաբթու «Հանրագիտակ»ի մէջ անոր պարունակութեան կէսը պիտի գտնուի, անշուշտ հիմակուան պարունակութենէն զատ։ Նոյնպէս Ֆրանսական թերթը տակաւին Պոլիս չի հասած, 8—10 օր առաջ մենք արդէն հրատարակ հանած, և մեր բաժանորդներուն տուած պիտի ըլլանք։

Ամբողջ տարուան մէջ 2500ի չափ հրապուրիչ կերպով գծուած սեւ պատկերներ պիտի բովանդակէ, որոնք պիտի ներկայացնեն, ճիշդ և ճիշդ Լա Սէզօնին պէս, կանացի շրջազգեստներու (ռօպ), մեկնուցներու (մանթօ), ճերմակեղէններու, խանձարուրներու, ինչպէս և փոքր և

չափահաս աղջկանց, և մինչեւ 14 տարեկան պատանեակներու յատուկ զգեստեղէններու վայելչազարդ և նորաձեւ տեսակները։ Նոյնպէս, անկողնոյ ճերմակեղինաց, վարագոյրներու, կահ կարասիներու, և ուրիշ անական զարդարանքներ։ «Պաօալու»ի ամէն տեսակները, կապերտագործութեան վերաբերեալ զանազան պատկերներ, ժանեակներու (սանթերա), հիւսուածակերտներու, լամբարի լուսարդերներու, ծաղիկներու, հրանրկարներու, եւայլն, եւայլն օրինակներ, պատրաստութեան եղանակներու բացատրութիւններով հանգերձ։

Մեր այս ձեռնարկի յաջողութիւնը կատարելապէս ապահովցնելու համար, ամէն կարգադրութիւն յանձնած ենք, հրատարակութիւններով և գործերով հանրածանօթ, արուեստագէտ Մ. Գալէնտէր էֆ. ի, որ ամէն կերպով թերթը օգտակար և հրապուրիչ պիտի ընէ, իր ճարտար գրիչով և հանճարով։

Թէ թէ՛նչ պայմաններով, «Հանրագիտակ»ի մէջ պիտի աւելցնենք այս կանանց Բաժինը. ահաւասիկ։

Որովհետեւ այսպիսի ձեռնարկ մը մեծամեծ ծախքերու կը կարօտի, և մեր արդի բաժանորդաց թիւն ալ հեռի է այդ ծախքերը դոցելէ, պիտի պարտաւորինք նոր բաժանորդագրութիւն մը բանալ, ապահով կերպով ճամբայ ելլելու համար։ 500 նոր բաժանորդներու պէտքն ունինք թէեւ, բայց առ այժմ, եթէ 300 նոր բաժանորդներ ունենանք, իսկոյն պիտի ձեռնարկենք այս նոր ճիւղին։

Ահաւասիկ բաժանորդագրութեան պայմանները.

«Հանրագիտակ»ի այժմու տարեգինին վրայ միմիայն 30 զրուշի պզտիկ յուսելու մը պիտի ընենք. որ ըսել է 80 զրուշի փոխարէն պիտի ստանան մեր բաժանորդները, թէ «Հանրագիտակ»ի հիմակուան պարունակութիւնը, և թէ Լա Սէզօնի վայելչազարդութեան Հայերէն թերթը։

Արտասահմանի համար տարեգինը պիտի ըլլայ 20 ֆրանք։

Արմիայն վայելչազարգութեան բա-
ժինը ուղղներուն, տարեկան 60 զրուշ
Պոլսոյ և Գաւառներու համար. իսկ ար-
տասահմանի համար 16 ֆրանք:

Մեր արդի բաժանորդներէն անոնք
որ կը փափաքին վայելչազարգութեան
այս նոր բաժինն ալ ստանալ, պէտք է
տարբերութիւնը վճարեն:

Վերայիշեալ պայմաններէն դուրս,
տարեկան 30 զրուշի յաւելումով մ'ալ
պիտի տանք մեր բաժանորդներուն 36
մեծագիր և գունաւոր սքանչելի կերպով
նկարուած պատկերներ, որոնք պիտի
ներկայացնեն կանանց, օրիորդներու,
մանուկներու և պատանիներու նորաձեւ
հագուստներ, դիւարկներ, եւայլն, եւ-
այլն:

Իսկ ամիսը անգամ մը թերթիս մէջ
պիտի տրուի, իրանազգեստի, չիլապ-
գեստի, վերարկուի, մեկնոցակներու,
ճերմակեղէններու, եւայլն, եւայլն, եւ-
այլն տիպարներու այլազան օրինակներ,
զորս բնական մեծութեան վերածելու
համար, չափական և համեմատական
դրութեամբ բացատրութիւններ պիտի
տրուին: Անոնք որ հետեւած են ցարդ-
կա Սէզոնի «յաւելումներն» մէջ պարու-
նակուած արդուզարդներու ընդօրինա-
կութեան, գիտեն թէ որքան դժուար է
զայնս ունէ անձի մը իսկական չափե-
րուն վերածել, այս կէտն է որ Գալէն-
աէր էֆ. վերը յիշուած իր դրութիւն-
ներով ամենուն դիւրահասկնալի պիտի
դարձնէ:

Եւ երբ մեր այս նոր ձեռնարկին մէջ
պէտք եղած քաջակերութիւնը գտնանք,
և նոր բաժանորդաց թիւն 500ը անցնի,
այն ատեն ալ «Հանրագիտակ»ի ներկայ
ծաւալը կիսով չափ մեծցնելով, ընդար-
ձակ տեղ մը պիտի տանք գրական ճիւ-
ղին, հրահանգիչ մանրամասնութեան, նո-
րավէպերու, բանաստեղծական գրու-
թեանց, դրօսեցուցիչ ժամանցներու, եւ-
այլն, եւայլն, եւայլն:

Բաժանորդագրութիւնը այժմէն բաց-

ուած ըլլալով, հրաւեր կը կարգանք բո-
լոր Պոլսեցեան և Գաւառաբնակ Հայ Ըն-
տանեաց: Անոնք որ կը փափաքին բա-
ժանորդ արձանագրուիլ, թող հաճին մի-
այն թերթիս մէջ գտնուած հաւանու-
թեան զիւրը ստորագրել և մեզ զոր-
կել: Եւ երբ նոր բաժանորդաց թիւը
300ը լրանայ, այն ատեն բաժնեդնոց
գանձումը պիտի սկսինք, և իսկոյն թեր-
թը պիտի հրատարակենք:

Ղ. ԲՈՒՍ

ՕՏԱՐ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Անշուշտ ինձ նման շատեր ընթերցան Զեր
պատուական «Հանրագիտակ»ի 27 թուոյն
մէջ, «Կրթական հարցեր» վերնագրով յօդ-
ուածն:

Պ. յօդուածագիրն, Ազգ. և մասնաւոր
կրթական յարկաց վրայ համառօտ տեսութենէ
մը վերջ, բոլոր յետադիմական արդիւնքն,
պաշտօնական մարմիններու, և կրթական վա-
րիչներու կը վերագրէ:

Նոյնպէս կը յարէ. «Ծնողք երբէք մեղադ-
րելի չեն: որ իրենց զաւակներն օտար դըպ-
րոց կ'ուղարկեն»:

Սակայն՝ երբ ուշի ուշով ի նկատ առնուի
սոյն կենսական խնդիրն, այո՛, պիտի համո-
զուինք որ, այնչափ պատասխանատու չեն
պաշտօնական մարմիններն, որքան որ՝ ժողո-
վուրդն: Ահա թէ ինչպէս:

Ամէն միջավայրի մէջ, ժողովրդեան ան-
տարբերութիւնն ու սառնութիւնն է որ վար-
ժապաններն նիւթականի կողմանէ, տկար և
անզօր գտնուելով, յառաջդիմական յարատեւ
քայլեր չեն կարողացած առնել. վասն զի, մի
կողմանէ տրտուեցնող ու գանգատ, չեն պակ-
սած ժողովրդեան մէջէն. միւս կողմանէ դաւ-
տիարակութեան պաշտօնեաներն՝ վճատեցնե-
լով, կը նուազցնեն նաեւ, վարժարանաց հա-
մակիրական վարկն ու ազդեցութիւնն. զի՛ ո-
րո՞ւ են վարժարանք, եթէ ոչ՝ ժողովրդեան.
ո՞վ է վարժարանաց ազդեցութիւնն նուա-
տացնողն. — ժողովուրդն. ո՞վ է տրտուեցնող
գանգատ բարձրը վարժարանաց դէմ, եթէ
ոչ՝ նորէն ժողովուրդն:

Ուրեմն, ժողովուրդն է միայն, որ թէ կը

գանգատի, թէ կը քամահըէ, և թէ սառե-
լով վարժարաններէն, նոյն իսկ՝ պատճառ
կ'ըլլայ, կրթական յարկերու երեքման ու
քայքայման:

Բ. Նոյնպէս ժողովուրդն, նուազ գումար-
ով մը, վարժարաններէն մեծամեծ հրաշք-
ներ կը յուսայ. այո՛, վարժարաններն կարող
են այդ հրաշքներն գործել եթէ ծնողք, սըր-
տով ու մտքով և թէ բարոյապէս աջակցին
ու քաջաբերեն գաղափարակրթեան պաշտո-
նէութիւնն:

Թողունք սոյն բարոյական քաջաբերու-
թիւնը, սակայն նիւթականի մասին ինչ ը-
սենք. ծնողք կը զժկամակին իրենց գաւա-
կաց կրթութեան համար թոշակ վճարել Ազգ.
վարժարանաց: Մնողք վարժարանաց պաշտո-
նէութիւնէն կը պահանջեն ո՛չ միայն ուսմունք,
գիտութիւնք, այլ նաեւ, զայեկութիւն,
մայրութիւն, հայրութիւն. — սակայն այս-
չափ պահանջմանց փոխարէն, ինչ կը վճարեն
վարժարանաց. գրեթէ նուազ բան մը: Մի-
թէ սոյն սառնութեան պատճառը չքաւորու-
թիւնն է. բնաւ ամենեւին՞:

Կրնանք իրօք ապացուցանել, որ մեր ծնո-
ղաց ժխտութիւնը միայն իրենց վարժարա-
նաց համար է. իսկ օտար դպրոցի նկատմամբ,
ո՛չ միայն առատաձեւն, այլ նաեւ սիրահար
և ջատագով են:

Հեռուներն չ'դիմենք, առենք Զմիւռնիոյ
Ազգ. երկսեռ վարժարաններն, ուրիշ մեծ
մեծ արդիւնքներ կ'ապրտենք, աննախանձեղի
դրութեան մէջ է. զի՛ շարունակ տեսչու-
թեան փոխտեսչին և մանաւանդ ժողովրդ-
դեան վարժարաններու նկատմամբ ցոյց տը-
ւած արհամարանքն ու ցրտութիւնն այս վի-
ճակի հասուցած են: Մինչդեռ վարժարանն
այսպէս կրեւրի ու կը ծփայ, անդին տեղա-
կան Հայ ունեւոր գերդաստաններէն շատերն,
իրենց զաւակներն օտար դպրոց կ'ուղարկեն,
սուսա թոշակ վճարելով: Ինչպէս՞ ունինք,
Ամերիկեան վարժարանն, ուր լսածիս նայե-
լով կը յաճախեն քսանէ աւելի Հայ օրիորդ-
ներ տարեկան միջին հաշուով 20 ոսկի վճա-
րելով, ըսել է տարին 400 ոսկի մօտ գու-
մար մը: Թողունք՝ միւս Անգլիական ու Ֆր-
րանսական արական և իգական վարժարան-
ներն յաճախող Հայ զաւակներն, որ նոյն
գումարէն աւելի ալ այս օտար վարժարան-
ներուն կը վճարեն, այս հաշուով տարին 1000

ոսկի մօտ կըրիկ գումար մը օտարին ծոցը
կը յանձնուի: Եթէ այս կարեւոր գումարն,
այժմեան վարժարաններու համար ծախսուած
գումարին վրայ բարդուի. ո՛չ ապագէն մե-
ծամեծ արդիւնք յուսով կը բերէ:

Ո՛չ ապագէն այն ունեւոր դաւակաց շնոր-
հիւ, կատարեալ կրթութիւն և գիտութիւն
կ'առանան նաեւ աղքատիկ մանկիկներն, ո-
րով՝ ունեւոր ծնողք, ո՛չ միայն իրենց ծնո-
ղական սարաքը կատարած կ'ըլլան իրենց
զաւակներն կրթելով, այլ նաեւ, բարերար
կը հանդիսանան աղքատիկ զաւակաց նկատ-
մամբ:

Ահա՛ սոյն օտարամուլթեան շնորհիւն է,
որ օտարաց դպրոցներն կը բազմանան և կը
յարատեսեն, իսկ մեր Ազգ. վարժարաններն
շարունակ կը ծփան ու կ'երերին իրենց քայ-
քառն վիճակին մէջ: Օտարք կը շահին նիւ-
թապէս, մենք կը փնտսենք, նիւթապէս և
բարոյապէս:

Ինչո՞ւ ուրի՛մն, մեր գործերը մեր ձեռքով
չ'անօրինենք. ինչո՞ւ մեր զաւակները մեր ձեռ-
քով, ու մեր դրամներով մեր Ազգ. վարժա-
րանաց մէջ չ'կրթենք: Միթէ կարող չե՞նք,
այսպիսի անկախ և պատուաւոր դերք մը
դրուել, մեր զաւակաց կրթական գործը մեր
ձեռքով տնօրինելով, մեր վարժարանաց վի-
ճակը բարւոքել և մեր ապագան սպառնալով:

Այո՛, կրնանք. երբ՝ մեր ուշադրութիւնը
մեր դպրոցաց շուրջը դառնայ, երբ՝ ի բաց
ընկինք, օտարափրութեան ոգին, և մանա-
ւանդ զգանք որ՝ «ՕՏԱՐԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԷ՛
ՄԻՇՏ ՕՏԱՐ է»:

Քուշտատ

Կ. Պ. Բ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՄԵՐ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԸ

(Ծարտն-1911. 7-ի 1-ի 30)

Առողջաբանութիւնը ամէն անհատի
համար չըթցլատրեր որ մարմին վրա-
յէն բրդեղէն գործածուի, այլ միայն ծո-
վային զբաղմամբ պարտապոյններու, զին-
ուսրներու, դաշտի և գործարանի աշ-
խատուորներու, որսորդներու, վերջա-
պէս ամէն անոնց համար որոնք խնամ-
տեղուանք մնալու և կամ օգնային ամե-

նաոտառիկ փոփոխութեանց և հոսանքներու ենթարկուելու ստիպուած են: Բուրդէ սառեակը, բաճկոնները և անդրալարտիկները մասնաւորաբար կը յանձնարարուին ցնցղատապի (bronchite), հարբուխի (rhume), յօդացաւի (rhumatisme), ջղացաւի (névralgie), յօդատապի (goutte), աղեաց վարդաբլի բարբորման (inflammations intestinales chroniques), և տակաւին շատ տեսակ հիւանդութեանց ենթակայ եղողներու, վերջապէս սեւիցէ հիւանդութենէնոր ապաքինողներու (convalescents):

Կարծէ աւելցնել նաեւ թէ անգամ մը որ սովորութիւն ըլլաւ բրդեղէն գործածել մարթի վրայէ, զայն լքել շատ վնասգաւոր է, երբոր ըստ դիպաց մարթի վրայէ բրդեղէն կրելու հարկը ներկայանայ, օրինակի համար յօդացաւի, ցնցղատապի, եւայլն պատճառաւ, յետապարինման առանց անպատեհութեան տեղի տալու պէտք է անմիջապէս մարթի վրայէ գործածելէ դադարել:

Ա. Կենդանեաց մարթերը. — Կենդանեաց մարթերը իրենց զեղմբէն (toison) և կամ այն է մուշտակներէն (fourrure) տուանց մեկուտացած վիճակի մէջ շատ գէշ ջերմահաղորդիչ են, բայց և այնպէս շատ պաղ օդի պատճառաւ մարմնական տաքութեան նուազումը արգելելու մեծ առաւելութիւնն ունին: Այնպիսի մարթերը հիւսիսային ցուրտ երկիրներու բնակչաց (*) համար գերբնութիւն հազուադէպ կը շինուին: Գալով իրենց զեղմբէն մաքրուած և կաշիի վերածուած մարթերուն, ասոնք ալ մուճակի շինութեան կը գործածուին:

Բ. Զգախէժ. — Զգախէժէ զգեստները գէշ ջերմահաղորդիչ են, ուրեմն կրնանք կռահել թէ մարմնոյն տաքութիւնը լաւ կը պահեն, ցուրտէ և խոնավութենէ կապահովեն, սակայն շատ նեղացուցիչ են:

Գ. Պատառներուն հիւսուածութիւնը. — Անգայտ հիսուած հաստ և կաւուղ պատառները մարմինը տաք կը

պահեն, մինչդեռ բարակ և խիտ բանուած կտառները ընդհակառակն զով կամ պաղ, որովհետեւ անգայտ հիսուած կտառին լայն օղերուն (maille) մէջ քիչ մը օդ կը գտնուի, և օդն ալ ինչպէս որ յայտնի է անջերմահաղորդիչ ըլլալուն պատճառաւ կենդանական ջերմութեան պահպանմանը կը ծառայէ, հետեւաբար և մարմնոյն մեկը կ'արգիլէ: Մուշտակները իրենց երկայն փետուրներուն մէջ տեղւանքը օդը լաւ կերպով պարփակած ըլլալուն համար է որ բնական տաքութեան պահպանմանը ամենալաւ միջոցներ են:

Դ. Պատառներուն գոյնը. — Պատառներու գոյներն իրարու բազմադաւանաբար արեգակնային ճառագայթներէն առաւել կամ նուազ կազդուին իրենց կարողութեան չափով: Այս առթիւ Սթառք փորձ մը կատարած է, այսինքն՝ ջերմաչափի մը սեղիկագանձը յաջորդաբար գոյնզգոյն պատառներով փաթկեցնելով, անդիկին մինչեւ եօթանասուն աստիճան բարձրացումը որ գոյնով որ ամենէն առաջ տրագապէս երեւան գայ, այն գոյնը արեգակի ճառագայթներէն շուտ կազդուի ըսեր է. սոյն փորձին մէջ սեւ գոյնը ամենէն առաջ անդիկը եօթանասուն աստիճանի բարձրացուցեր է, իսկ ամենէն վերջը ճերմակ գոյնը. կապոյտ, դեղին, կարմիր և կանաչ գոյնները իրարմէ տարբեր միջակ աստիճաններ ցոյց տուած են:

Վերոյիշեալ գիտական փորձէն կը հետեւցուի որ՝ գունաւոր զգեստներէ նամանաւանդ սեւ գոյնէն տաքութիւնը շատ շուտ կը թափանցէ, իսկ ճերմակէն ընդհակառակն քիչ և կամաց, որովհետեւ սեւ գոյնին ջերմածծիչ յատկութիւնը չափազանց է ու ջերմատարած կարողութիւնը նուազ, իսկ ճերմակինը ասոր հակառակն է: Ուրեմն գոյներու սա յատկութիւնէն կրնանք եզրակացնել թէ ճմուռը ցուրտ եղանակին հարկ է ըստ առողջապահական ողջպահիկ պայմանաց

(*) Ականջը խօսի բեւեռախոյզ Անտրէին:

սեւ կամ մութ գոյն զգեստ հագնել, իսկ ամառը բարձրովին ճերմակ:

Ե. Կոճուներուն խոնաւածիգ յառ-կութիւնը. — Կարեւոր կէտերէն մին ալ կոճուներուն խոնաւածիգ (hygrometrique) յատկութիւնն է, որ կառաւին տեսակին համեմատ կը տարբերի: Կոճու մը որքան որ խոնաւութեամբ համակուելու ընդո-նով ըլլայ, մարմինը այնքան քիչ տաք կը արհէ. որովհետեւ շուտով խոնաւու-թեամբ տաքորելուն պատճառաւ մարմ-նայն տաքութիւնը կ'առնէ արագապէս շոգիանալու համար, ուսկից ցրտառութիւն մը առաջ կուգայ: Յայտնի ճշմարտու-թիւն մ'է որ մարդիկ նամանաւանդ արք իրենց ծեռային բերմամբ և արհեստին պահանջմամբ միշտ շարժականութեան մէջ կը գտնուին, բնական է թէ կը բըրտ-նին. քրտինքի համար ամենէն յարմար հագուուոր այն է որ ջուրը յամբարէն կը ծծէ, և տպա յամբարէն կ'արձակէ, այս յատկութիւնը ունեցողներուն ամենէն ա-ռաջինը և գերբնաիրը բրդեղէնն ընդ որս անուեակն է, որոս մասին խօսուե-ցաւ: Գուլիէի հետազոտութիւնները կա-պացուցանեն թէ՝ որեւիցէ կառաւ մը ծծուած ջուրը երկու մասի կը բաժնուի, մին՝ ճշմարիտ խոնաւութեան ծնունդ կուտայ առանց կառաւին մէջ բնագիտա-կան փոփոխութիւն մը առաջ բերելու, և չը կրնար նաեւ ճնշմամբ վանուիլ. միւս մասը միջակայութեան (interposition) ջուր կ'ըսուի, որ կառաւին օղակները և կամ այն է ծակտիկները կը խցէ, ու կառաւին մէջ բնագիտական փոփոխութեան մը ծնունդ կուտայ, և Կոսսամբ ճնշումով կրնայ վարարուիլ. սա բացատրութիւնը աւելի գիշարաւ հասկցնելու համար կ'ար-ժէ յետագայ օրինակը մէջ բերել. այս-ինքն՝ եթէ կառաւի կառք մը ջուրի մէջ թաթիւներ և հանելէ վերջ քամենք, մի-ջակայութեան ջուրն է որ կը վազէ, քա-մելէ վերջ կառաւը՝ աւելորդ է լսել որ խոնաւ վիճակ մը կ'առնէ, այդ ալ ջու-րին խոնաւութիւն պատճառող մասն է

որ կառաւն ծծուած է, և որ քամելով երբեք չը վարարուի, այլ միայն շոգիա-ցումով ինքնիրեն խոյս կուտայ:

Կառուներու խոնաւածիգ զօրութիւնը կը տարբերի իրենց յօրինուածութեան մէջ մանող տարբերուն համեմատ: Ըստ Գուլիէի, բամպակը ջուրին խոնաւառիթ մասը ծծելու քիչ կարողութիւն ունի. կանեփինը ալ աւելի է, իսկ բուրդին ծծման կարողութիւնը ամենէն աւելի է. այս առաւելութեան համար է որ բըր-դեղէն կոճուները ապահովապէս կրնան յանձնարարուիլ առ հասարակ ամենուն:

Զ. Հագուուորի ձեւը. — Ամենէն ու-շագրաւ կէտն է հագուուորի ձեւը: Հա-գուուոր՝ ինչ տեսակ կառաւ ալ շինուած ըլլայ, պէ տը է որ գործարանաւորու-թեան ոչ մէկ պարտականութեան ար-դեք ըլլալու չափ լայն ըլլայ, զգեստը պէտք չէ որ արեան շրջանին, շնչառու-թեան և մարտադրութեան կատարման նե-ղութիւն պատճառէ. չը ճնշէ մարմնայն ուեւէ մէկ կողմը, և ոչ ալ զրգռիչ չըփ-ման մը առիթ տայ: Այլ սակայն այս առթիւ աչքի առջեւ կը ներկայանայ պա-րագայ մը, որ որքան դիտելի նոյնքան և առաւել եւս ցաւալի է. այս՝ փափ-կառուն սեռին մէջ տարածուած ռափսու-թիւն մը՝ գործածութիւնը սեղմիրանին որուն կիսատկրեայ կարծր թելերուն տակ ինչ սոսկալի հեղութիւններ և ծանր տան-ջանքներ ու ճնշումներ կը կրեն խեղճ ու անբաղդ թուրքերը: Յաջորդ անգամ մաս-դիր ենք անդրադառնալ այդ յոռի սո-վորութեան, շեշտելով հանդերձ անոր վնասակար հանգամանքները:

Ուրեմն այս անգամ այս չափով շա-տանալով, մեր Յարգելի ընթերցողնե-րէն կը խնդրենք որ հաճին շարաթ մը համբերել վերստին տեսնուելու համար:

Ա. ԽԱՆՃԵԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԴՈՐՇՆԱԿԱՆ

Ե.

Առանց գիտութեան երկրագործութիւն ընողը կը նմանի, մարեւել մօտ եղող լապտերի մը տղօտ լոյսով մեթին մէջ յառաջացող առձի մը:

Երկրագործութիւնը արուեստ մ'է, այն տեսակ արուեստ մը՝ որ «բնական գործիչներու» (agents naturels) շնորհիւ կը բարեփոխէ հողին, օդին և տեսակ տեսակ ազդերու մէջ գտնուած նախնական մարմինները և իր արգիւնը կ'ունենանք կամ բոյսեր և կամ կենդանիներ, ինչպէս որ արհեստաւորը կը բարեփոխէ իր գործարանին մէջ երկրագործութեան յառաջ բերած նախնական մարմինները, և կը շինէ մեզ համար կտաւներ, կերպարներ, եւայլն: Բայց երկրագործին ու արհեստաւորին մէջ մեծ տարբերութիւններ կան. արհեստաւորը գրեթէ բնաւ չ'իտրհի որդի փոփոխութեանց վրայ, իսկ երկրագործը՝ պէտք է միշտ իւր մտքին առջեւ ունենայ թէ փոփոխի մը, կարիւստ մը, ձմրան ու գարնանային սառում մը կրնան մէկ վարկենի մէջ բոլոր բերքերը բնաջինջ ընել. ահա այս պատճառաւ երկրագործը պէտք է որ «բնագիտութեան» ու «օդերեւութաբանութեան» վրայ ծանօթութիւններ ունենայ, քանի որ կարգ մը գործիքներու շնորհիւ կարող կ'ըլլայ ճանչնալ օդին փոփոխումները, անձրեւի կամ փոփոխիկի մը երեւոյթը, եւայլն, եւայլն: Արհեստաւորը իր գործիքները կը ճանչնայ. հողագործն ալ պէտք է որ իր հողին տեսակները ճանչնայ առ այս «երկրաբանութիւն»ը և «հանքաբանութիւն»ը մեծ դիւրութիւններ կ'ընծայեն:

Արհեստաւորը միշտ միեւնոյն բաներ կ'արտադրէ, իսկ երկրագործը՝ պարտական է տեսակ տեսակ բերքեր արտադրել, որով իւրաքանչիւր բերքերու պէտքերը ճանչնալ անհրժեշտ է: «Տարագիտութիւն»ը պիտի ուսուցանէ իրեն տարբարութիւն իր բոյսերը ու հողերը, և ճանչնէ անոնց բազմաբնութիւնը որով և պէտքերը:

Երկրագործը պէտք է գիտնայ հիմնապէս

«բուսաբանութիւն»ը, որպէս զի ճանչնայ իր մշակած բոյսերը:

Վերջապէս «կենդանաբանութիւն»ը և «անասնագիտութիւն»ը (zootechnie) կը ծառայեն երկրագործին ճանչնելու իր բնական կենդանիներու աճելու և յերակրումն միջոցները:

Բայց խնդիր է գիտնալ թէ արդեօք մարդ մը՝ որ այս գիտական պաշարը իւրացուցած է՝ կարող է լաւ երկրագործ մը ըլլալ: Ոչ, պէտք է նաեւ ի նկատի առնել երկրագործութեամբ զբաղիլ ուզող անձին Ֆիզիքական ու բարոյական յատկութիւնները: Եթէ լաւ առողջութիւն մը չ'ունիք, գացէ՛ք ծծելու դաշտային մաքուր օդը, բայց ո'չ աշխատութիւն փնտռելու: Լաւ երկրագործ մ'ըլլալու համար դաշտային կեանքը և «հող»ը սիրելէն՝ դատ, պէտք է ունենալ առողջ և քիչ շատ լաւ կազմուած մարմին մը, որպէս զի կարենայ տակալ ամրան տաք արեւուն և ձմրան սառուցիկ հովին և ձիւնին: Հողագործութեան մէջ ժրաջանութիւնը մեծ դեր կը խաղայ, գիտէք որ «Ժամանակը ստակ է», երկրագործը պէտք է վայրկեան մը պարապ տեղը կորսնցնէ. օրինակի համար՝ եթէ այսօրուան ըլլալիք գործը վաղուան ձգուի, կրնայ ըլլալ որ հետեւեալ օրը անձրեւ տեղայ ու այսպէս գործերը մէկ քանի օր ուշանալով ամէն ինչ աճապարանքի գայ:

Երկրագործը պէտք է որ ագարակին կամ արտին մէջ կատարուած իւրաքանչիւր գործողութիւններուն անձամբ ներկայ գտնուի որչափ որ իր ժամանակը կը ներէ, որովհետեւ ինչպէս Փռանաական առակը կ'ըսէ. «Նա որ չ'հսկեր իր գործաւորներուն վրայ, իր քսակը անոնց տրամագրութեան տակ՝ դրած կ'ըլլայ»: Լաւ երկրագործ մը իր գործաւորներէն ամենէն վերջ կը պառկի, և առաւօտուն ամենէն կանուխ կ'ենէ անկողինէն:

Հողատէր մը երկրագործ ըլլալէ առաջ, պէտք է ճանչնալ կարելի եղածին՝ չափ իր հողերուն տեսակները, անոնց բազմաբնութիւնը, պէտք է ուսումնասիրած ըլլայ երկրին հանգամանքները, տնտեսական վիճակը, և ըստ այնմ որոշէ իր արտադրելիք բոյսերուն տեսակները:

Երկրագործը՝ իր հողերուն մէջ յառաջ բերած այլեւայլ նիւթերը (որմտիք, երկրագործական նախնական նիւթեր, եւայլն) պարտա-

կան է ծախել անոնց տեղը ուրիշներ գնելու համար. զոր օրինակ՝ երկրագործը պէտք ունի մեքենաներու, հողերը վարելու համար, եւ այլն. և աղբերու՝ հողերը պարարտացնելու համար, որով լաւ երկրագործ մ'ըլլալու համար պէտք է մարդ գիտնայ քիչ մը տոմարակալութիւն, և ունենայ քիչ մը գաղափար վաճառականութեան վրայ:

«Առաջին մարդը որ ցորեն ցանեց, և անոր անուցիչ յատկութիւնները ճանչցուց, լաւ գործ մը գործեց. նա որ ապա դիտեց թէ հետզհետէ երկրին պողարներութիւնը կը նշուազի և թէ պէտք է աղբի միջոցաւ անոր հարստութիւնը վերակազմել, առաւել ազնիւ գործ մ'ըրաւ. վերջապէս այն դիտուեց որ իր աշխատանոցին մէջ այս հարցումը ուսումնասիրեց և ճանչցաւ հողէն անհետացած տարրերը ու առաջ սրկեց թէ՛ հարկ է այդ տարրերը հողին վերադարձնել լաւ բերքեր ունենալու համար, միւսներէն շատ աւելի ազնիւ և գեղեցիկ գործ մը կատարեց:

«Նոյնպէս նա կենդանիները լաւ խնամելու գաղափար ունեցաւ. խնամութեան փորձ մ'ըրաւ. բայց նա որ սորվեցուց թէ՛ խնամքով և «ընտրողականութիւնով» (sélection) կարող ենք կենդանիներու ցեղերը ազնուացնել, հառաքը մեծցնել, անոր մօտ և կաթիլ քանակութիւնն աւելցնել ու որակութիւնն ազնուացնել, նա շատ մեծ մղում մը տուաւ երկրագործական գիտութեան»:

Ահա՛ այս մեր յօդուածին պարունակութեամբ ատենքնիս ալ կրնանք համոզուիլ թէ երկրագործութիւնը ռամիկին, ժողովրդին ամենատեղէն դասակարգին պէտք չէ թողուլ, այլ պէտք է յանձնել գիտական մեծ պաշար մը ամբարած ձեռնհաս անձերու:

Երկրագործն եթէ ամուսնացած է, պէտք է որ իւր կնոջ բնաւորութիւններն յարմարին. կինը միայն սալոնի մը զարդն կամ տան տիկինը չէ, երկրագործին կինն ալ մեծ դեր պէտք է խաղայ, և իր աշխատութեամբ օժանդակէ իր ամուսնոյն գործերուն: Եւրոպայի մէջ հողագործներու կիներու հանդիպած եմ, որոնք ագարակին մէջ տեղի ունեցած գործողութիւնները օրը օրին տետրակներու մէջ կ'անցնէին, այսինքն՝ «տոմարակալութիւնը» կ'ընէին: Մեր կիներէն այս չենք սպասել, որովհետեւ անոնց ամենամեծ մասը կարգաւ գրել չեն գիտեր, և պիտի ըսեմ նա-

եւ թէ՛ դառնաւորութեամբ կարգաւ գրել գիտցող կիները «մասի վրայ կը համբուին». բայց կրնան ուրիշ միջոցներով օգտակար ըլլալ իրենց ամուսնոյն, եթէ կը սիրեն երկրագործութիւնն ու քիչ ու շատ տեղեկութիւն ունին, իրենց պարտքն է կերակրել ու խնամել հաւերը, ճագարները, հնդկահաւերը, որոնք — ինչպէս ասիք պիտի ունենանք ուրիշ անգամներ խօսելու այս մասին — կոկիկ գումար մը, չափ մը յառաջ կը բերեն երկրագործուհին է որ պարտի մշակել ագարակին պարտէզը, ունենալու համար աժան և լաւ բանջարեղէններ, և պատրաստել գործաւորներուն կերակուրները կարելի եղածին չափ համեղ և մաքուր:

Կը տեսնանք որ լաւ երկրագործ մը, և երկրագործուհի մ'ըլլալու համար պարտինք ունենալ ընդարձակ տեղեկութիւններ: Երկրագործական վարժարան ու գրքեր չ'ունենալու համար, խորհեցանք «Հանրագիտակ»ի մէջ տեսական և գործնական դաս մը բանալ. կը խնդրուի Գաւառացի երիտասարդներէն որ ասկից վերջը, ձմեռ գիշերները այս պատուական թերթին կարդան ու բացատրեն պարունակութիւնը պարզ ժողովրդին, որ կարգաւ չ'գիտեր. այսպէսով իրենք ալ նպաստած պիտի ըլլան մեր երկրագործներու յառաջանման և բարեօրոյնման:

Մեր երկրագործական դասերը երկու մասերու պիտի բաժնենք.

Ա. Ընդհանուր երկրագործութիւն որ ավիտի բաժնենք.

1. Երկրագործական օգեբերութեամբութիւն:

2. Հողագիտութիւն որով պիտի սորվինք հողերու տարբերը, տեսակները, եւ այլն:

3. «Հողերու բարեօրոյն» (amendement), որով պիտի սորվինք թէ՛ ինչպէ՞ն կարելի է հողին ֆիզիքական յատկութիւնները փոխել:

4. Աղբեր:

5. Մշակութեան կերպերը:

Բ. Մասնաւոր երկրագործութիւն.

1. Սննդային բոյսեր:

2. Բանջարեղէններ:

3. Արհեստական բոյսեր:

4. Assolement:

Որով յառաջիկայ մեր յօդուածով պիտի սկսինք խօսիլ երկրագործական օգեբերութեամբութեան վրայ:

Ռոտմիս

Մ. Կ. ՄԱՆՔԵՆ

ՃԱՐՑԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԵՐԱԿՐԵՂԵՆՆԵՐԸ ՏՈՒՓԵՐՈՒ ՄԷՋ ԿԸ ՊԱՀԵՆ

Պատասխան թիւ 42րդ հարցումին

Հայկական Ս. Յ. Պողիկեան էֆ. կը հարցընէր մեզ թէ՛ ինչ միջոց գործածելու է տուփերու մէջ բանջարեղէններ եւայլն պահելու համար. թէ իրենք կը փորձեն Հալէպի մէջ, բայց չեն յաջողիր, մասնաւորապէս տուփերը մածոյցով (լէհիմ) զօդելու (լէհիմ ընել) մասին:

Պողիկեան էֆ. այնպիսի հարցում մը կ'ուզէ մեզ, որ կարգ մը արհեստներու գործունէաց խորը պիտի թափանցենք. այս մասին կրնանք խորը գործնական միջոցները հաճութեամբ պիտի սովորեցնենք մեր սիրելի ընթերցողներէն: Եւ ինչ որ դրամով պիտի չի կրնային ձեռք բերել, հոս՝ այս օգտակար թերթին մէջ, ժանորդագրութեան չնչին գումարի մը խաբէն դիւրութեամբ պիտի սովորին: Մենք թէ՛ թէ՛ բոլոր անոնք որ պիտի օգտուին մեր այս ճարտարարուեստական դասերէն, (պիտի գըրենք այսուհետեւ հետզհետէ կարգ մը արհեստական նիւթերու վրայ, և մասնաւորապէս ներկարարութեան վրայ, որու մասին եւս շատ մը տեղերէ հարցումներ ուղղուած են) պէտք է թերթիս քաջալերութեան համար, իրենց բարեկամներուն և ծանօթներուն յանձնարարեն «Հանրագիտակ»ը, և մեզի նոր նոր բաժանորդներ բերեն, որպէս զի մենք ալ գոհ և ուրախ սրտով դրենք, և ամէն գործնական միջոցները սովորեցնենք իրենց: Այսպիսի հարցումներու պատասխաններ տալու համար, Եւրոպական թերթերն անգամ, կարեւոր գումարներ կը պահանջեն: Ուստի՝ բուն իսկ խնդրոյն մէջ մտնելէ տուա՛յ, պիտի խնդրենք Պողիկեան էֆ.է որ, հաճի Հալէպի մէջ ընդհանրացնել «Հանրագիտակ»ը, յանձնարարելով մանաւանդ անոնց, որոնք տուփերու մէջ բանջարեղէններ, եւայլն պահելու արհեստին գաղտնիքը սովորիլ կը փափաքին. և ինչպէս կը տեսնուի, այս ճիւղը կը բանանք այս անգամ մասնաւորապէս Հալէպցիներուն համար:

Մենդեան վերաբերող նիւթերու երկարատեւ պահպանումը, (ըլլայ բուսային թէ կենդանային) առումին անտեսութեան մէջ այն-

չափ կարեւոր դեր մը կը խաղայ, որ շատ հին ժամանակներէ ի վեր, շատեր մասնաւոր ուսումնասիրութիւններ կատարած են այդ ճիւղին վրայ, շատ միջոցներ հնարած են, և հանճարեղ արհեստագործներէ շատեր, երբ կրցած են բուն նպատակին ըստ կարելոյն կատարեալ կերպով պատասխանել, իրենց սպորուստի միջոց մ'ընելէ վատ, այդ ճարտարարուեստներէն կարեւոր հարստութիւններ գիլած են: Մեր երկիրը՝ որ այնչափ առատ բերքեր ունի, և շատ մը նպաստաւոր պայմաններ արհեստագործին տրամադրութեան տակ կը գտնուին. դժբաղդարար ոչ ոք կը խորհի այդ միջոցներէն օգուտ քաղել: Եւրոպայէն շատ տեսակ անդեղէններ տուփերու մէջ պահուած, ինչպէս մեզի, նոյնպէս Հայաստանի ամէն կողմերը կը զրկեն, ժողովուրդը կը քաշեն, մենք ինչո՞ւ չի կրնանք օգտուիլ անիւ:

Մենդեանք երկար ատեն անվթար պատահարէն պատուական և շահաւեր արհեստներ, Եւրոպայի մէջ անգամ, մէկ քանիներու ձեռքը իրր գաղտնիք մնացած էր. բայց այսօր, գիտութիւնը կը գայ ժողովուրդին ձեռքը դնել, ամենէն աւելի դիւրին և վստահելի միջոցները. այնպէս որ, այսօր գաղտնիք մ'ըլլալէ դադրելէ վատ, մինչեւ իսկ տուներու մէջ անգամ դիւրութեամբ պատրաստելու եղանակներով, օգտակար և շահեկան պրաղում մը դարձած է:

Մենք չեն անուններու պահպանման եղանակներու վրայ խօսելէ առաջ, ձեռք կ'առնենք նախ բուսեղէնները, քանի որ Պողիկեան էֆ.ի հարցումը անոնց վրայ է:

(Շարունակէ)

Ղ. ԲՈԼՍ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ(*)

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Մանկավարժ բառը հին ծագում մը ունի. Թոյները «մանկավարժ» (pédagogue) անունը

(*) Մեր Պոլսեցի ու Գլուսաւացի ուսուցիչներու խնդրանքին գոհացում տալու համար, այսուհետեւ յաջորդական յօդուածներ պիտի հրատարակենք մանկավարժութեան վրայ, հետեւեալ Եւրոպական լուսագիտական հեղինակութեանց: Մ. Խմբ.

կուտային այն ոտքուկներուն, որոնք պաշտօն ունէին տղաքը դպրոց տանելու: Սակայն քիչ քիչ մանկավարժ բաւը իր անձուկ իմաստը կրօնացներով, աւելի լայն նշանակութիւն մը ունեցաւ, ինչպէս այսօր այդ անունով կը յորջորջենք այն ամէն անձերը, որոնց կոչումն է տղաքը դաստիարակել:

Ուրիշ կրնանք հետեւցնել թէ մանկավարժութիւնը արուեստ մը կամ աւելի ճիշդը գիտութիւն մըն է, որ իրեն նպատակ ունի դաստիարակութիւնը: Արուեստ մըն է ան՝ որովհետեւ իր կրթելու եղանակները պէտք է փոխէ ժամանակին ու միջավայրին համեմատ, ուսուցչին և ուսանողին ունեցած նկարագրին, խառնուածքին համաձայն: Աւելին կայ, ամէն ազգ պէտք է իր առանձնայատուկ եղանակները ունենայ դաստիարակութեան, որ պատշաճելու, յարմարելու է ազգին ընդհանուր ոգիին, ցեղին հաւաքական գաղափարներուն հետ:

Այս տեսակէտով մանկավարժութիւնը ամենէն ծանօթ ու տիեզերական գիտութիւնը պարտ էր ըլլալ, ու ամէն ոք իր արուեստ մը կիրարկելու էր զայն, դժբաղդարար այդպէս չէ, ընդհակառակը դիտուած է որ քաղաքակրթութեան յառաջացման հետ մարդոց մեծամասնութիւնը սկսած է ա՛լ աւելի արհամարել մանկավարժութիւնը, ու տղաքը կեանքի պատրաստելու ծանր հոգն ու պաշտօնը ձգուած է սակաւաթիւ այրերու և կիներու վրայ. թէեւ ամէն մարդ մանկավարժ կրնայ համարուիլ, քանի որ անպատճառ ո՛րեւէ կերպով կ'ազգէ իր շուրջը ապրող տղոց վրայ:

Վայրենիներուն մէջ մասնաւոր դաստիարակներ չկան: Ընտանիքը, ամբողջ ցեղը կը նպաստեն տղուն դաստիարակութեան, դաստիարակի մը պէտքը այն աստե՛ն զգալի կ'ըլլայ երբ աւելի կատարեալ քաղաքակրթութիւն մը կուգայ նորանոր պէտքեր ու բազմաթիւ սարտականութիւններ ստեղծել, ինչպէս այսօր: Ու այս քաղաքակրթ վիճակը չէ՞ որ պէտքը զգացուցած է մեզի զանազան արհեստներու, որով մեր բոլոր ուժը այդ կողմը դարձունելով ստիպուած ենք զանց ընել մեր սերունդին նկատմամբ ունեցած պարտականութիւնները, ինչպէս բռնադատուած ենք չկատարելու այն կարգ մը պարտականութիւնները զոր ունինք մեր անձին նկատմամբ:

Ուրեմն դաստիարակն ու դպրոցը քաղա-

քակրթութեան արդիւնքն են, սակայն քաղաքակրթութիւնը ինչ աստիճան զարգացման ալ հասնի, մարդկութիւնը միշտ ենթակայ պիտի ըլլայ սա անփոփոխ օրէնքին ազդեցութեան, այսինքն՝ պիտի ուզէ ըլլալ այն ինչ որ չէ, և այս նորութեան բաղձանքի վիճակն է որ այնքան պէտքերու, պարտականութեանց և իրաւունքներու ծնունդ տուած է. ուստի զարմանալի չէ որ ոչ ոք կ'ուզէ մանկավարժ ըլլալ, և մանկավարժութիւնը դժարոցի չըջանակին մէջ սահմանափակուած է միայն:

Այսու հոնդերձ՝ այսօր աւելի կարեւորութիւն կը տրուի մանկավարժութեան քան առաջ, ու հետզհետէ կ'ընդունուի սա ճշմարտութիւնը թէ պէտք չէ այնքան ուժ տալ տղուն մտաւորական կատարեալ մշակութեան. բայց հակառակ այս ամենուն մանկավարժութիւնը մի միայն դաստիարակութեան մարդոց վերապահուած գիտութիւն մըն է այսօր:

Բայց ո՛րքան որ ալ սահմանափակ ըլլայ մանկավարժութեամբ զբաղող անձերու թիւը, ո՛րքան որ ալ անձուկ ըլլայ այն միջավայրը ուր կը կիրարկուին մանկավարժական սկզբունքները, ու դաստիարակութեան ազդեցութիւնը ո՛րքան ալ կարճատեւ ըլլայ, սա ճշմարտ է թէ՛ այդ ազդեցութեան հետեւանքները անհուն են՝ թէ անհատին, թէ ընտանիքին և թէ ընկերութեան վրայ: Եւ ահա՛ այս մտածումով աւելորդ չենք համարիր մանկավարժութեան պէս լուրջ խնդիր մը ուսումնասիրելէ առաջ՝ պարզել մեր հայեացքները մանկավարժութեան նպատակին վրայ:

* * *
Բ.

Քիչ մը վերը ըսինք թէ՛ մանկավարժութիւնը դաստիարակելու գիտութիւնն է: Բայց ի՛նչ է դաստիարակութիւնը, անտարակոյս ամէն ոք համակարծիք է անոր նշանակութեան վրայ: Դաստիարակութիւնը մէկ խօսքով մարդը կրթելու, կազմելու գործն է, այսինքն՝ այն աստիճան զարգացնել անոր ֆիզիքական, մտաւորական ու բարոյական կարողութիւնները որ կարող ըլլայ օգտակարապէս ի գործ դնել այն ամէն իրաւունքները, զոր իր ստրած միջավայրը տուած է իրեն, ինչպէս նաեւ կատարել այն ամէն ընդհանուր և մասնաւոր պարտականութիւնները, զոր իր սպ-

բաժնի միջավայրը պարզապես դրած է իր վրայ : Ինչպես կրնանք լաւագոյն դատարարական մը տալ մարդուն , բայց այս խնդիրը քննելէ առաջ , ի նկատի առնելու է մարդուն բանած գիրքը կենդանի էակներու շարքին մէջ . թէ ինչպէս կազմակերպուած է և ինչ վախճան ունի այն ընկերութիւնը , որուն կը վերաբերի մարդ . որոնք են իր սյուսական դերերը . մարդ ինչպէս ապրելու է որ՝ կարենայ կրցածին չափ բարիք հասցնել թէ՛ իր անձին և թէ՛ ուրիշներուն :

Ֆիզիքական անասկէտով՝ մարդ գործարաններէ բաղկացած է , որոնց կանոնաւոր պաշտօնավարումը առողջութիւն ու կորով կը պարգեւէ ու սեռական մշտնջենաւորումը կ'ապահովէ :

Նոյնպէս մարդ իմացական ու բանական էակ մըն է : Իմացական՝ որովհետեւ կրնայ դիտել , յղանալ ու բաղդատել . բանական՝ որովհետեւ իրերը համակշռող է ու ճշգրիտ գաղափարներ ունի :

Վերջապէս մարդը զգայուն ու բանաւոր էակ մըն է : Զգայուն՝ մարդոց , իրերու և գաղափարներու նկատմամբ զգացած համակրութեամբն ու խորշնքովը , գորովովը կամ տատելութեամբը . բանաւոր և հոտ է իր ճշմարիտ մեծութիւնը՝ որովհետեւ կրնայ գերծ պահել ինքզինքը իր նիւթական գործարաններուն ազդեցութենէն , հրաժարիլ իր իմացականութեան յղացումներէն ու բանականութեան վճիռներէն , նոյնպէս դիմադրել խանդաղատանքի ու ատելութեան զգացումներուն :

Երբ ընդհանուր կերպով նկատողութեան առնելով քննութեան բովէն անցունենք մարդուն ամէն գործերը՝ կը տեսնենք որ բազմապատիկ ազդեցութեանց ու հակազդեցութեանց ենթակայ բարդ էակ մըն է ան , արդիւնք իր եռեակ բնութեան : Մերթ իր գարծարաններուն միայն կը հպատակի ու այն ատեն իր մակարդակը անասունին մակարդակէն բարձր չէ . մերթ իր իմացականութենէն ստաջնորդուած ու բանականութեանը հըլ՝ ամենէն զարմանալի բաները կը յղանայ ու ի գործ կը դնէ . յաճախ իր տեսութեանց խորութեամբը , իր որոշումներուն խմայտութեամբն ու օգտակարութեամբ հիացում կ'ապրէ ամենուն :

Ասկէ տանք կը հետեւցնեն թէ , «մարդ չար կը ծնի» , դատարարականութիւնը պէտք է

բարեփոխէ զանի . իսկ ուրիշներ , «մարդ բարի կը ծնի» , բնութեան պէտք է թողուլ ամէն բան : Կրկին ու ցաւալի սխալ մըն է սխիւս , որ երկուքի բաժնած է դատարարական կիշները . առաջինները՝ աւելի բարկութիւ՝ տեսնելով տղուն ունեցած հակումը դէպ ի չարը , կ'ըսեն թէ պէտք չէ հոգ տանիլ տղուն ընդհանուր կրթութեան՝ այլ անոր զգացումները միայն զարգացնել . իսկ վերջինները՝ կ'ուզեն աւելի ազատ զարգացում մը տալ տղուն բնական կարողութեանց :

ԶԱՐԵՀ ՆԵՄՏԻ

ՊԱՐՏԻՋՊԱՆԱԿԱՆ

ՎԱՐԴԵՏՈՒՆԿԻ ԱՍՊԱՐՈՒՏԸ

(DIASPIS ROSÆ)

Գում-Գափուէն Յր . Կ . Սաաթճեան էֆ . անցեալները վարդի թուփի ճիւղ մը զրկած էր , որու վրայ տեսակ մը ճերմակ թեփեր տարածուած էին . և կը հարցնէր մեզ թէ , ինչ են ասոնք , որոնցմէ վարակուած էին իր բուրաստանի մէջ գտնուած բոլոր վարդի թուփերը : Ահաւասիկ պատասխանը :

Տեսակ մը մանր միջատներ կան , որոց «վարդետունկի Ասպարուտ» անունը կուտան : Էգը ասպարի (գաղգան) ձեւով տափակ միջատ մ'է մոխրագոյն գեղնորակ , որ քիչ շատ նմանութիւն ունի մլուկի՝ բաց ի գոյնէն . կռնակին վրայ տեղ տեղ թուխ շիկագոյն և շատ մանր բիծեր կը գտնուին . իսկ փորին տակը կը նշմարուի փոքր և կակուղ մաշտ մը , որ իր մէջ կը պարունակէ տեսակ մը կարմիր հիւթ , որ միջատը ձգմած ատեննիդ , մատներնուդ վրայ կարմիր արատ մը կը թողու : Այս մաշտ մասին անմիջապէս տակը կը գտնուի ձուարան մը , 200ի չափ աննշմարելի փոքրութեամբ հաւկիթներ սարունակող :

Արուն՝ էգէն աւելի փոքր , բոլորովին կը տարբերի ձեւով , և աւելի կը նմանի խիստ փոքր ճանճի մը , կարմրագոյն մարմնով , խիստ բարակ և ճերմակ թեւերով , որոց ջիւերը նաեւ բաց կարմրագոյն են : Ասոնք՝ վարդի թուփերուն շուրջը թռչտելով էգերը կը փնտռեն , որոց հանդիպած ատեննին կը զուգաւորին , և անմիջապէս վերջը կը մեռնին : Այս զուգաւորութիւնը տեղի կ'ունենայ ապրիլի

վերջերը կամ մայրի սկիզբները, եղանակին ցրտութեան կամ տաքութեան համաձայն:

Էդերը գուգաւորուելն վերջը, եղած տեղերին կը մնան, կ'ուռին, և անմիջապէս ձուածութեան կ'սկսին. միեւնոյն տուն, տեսակ մը մածուցիկ հիւթ կ'արտադրեն (այնպէս կը կարծուի թէ վերը յիշուած կարմիր հիւթն է), որ թէ հաւկիթները, և թէ նոյն ինքն սողաբուտին մարմինը թուփի ճիւղերուն կը փակցնէ: Այլ եւս սողաբուտին մարմինը չորցած, ձերմակ մոխրագոյն, և թեւ թեւ թուփի մը կը նմանի, որ կը ծառայէ մի միայն հաւկիթները պահպանելու: Ահաւասիկ այս թեւերն են որ, ձեր վարդի թուփերուն վրայ տարածուած են:

Քիչ օրէն հաւկիթները կը ճաթին, որոց մէջն խիստ մանր որդեր դուրս ելլելով, կը տարածուին ճիւղերուն ամէն կողմը, և որոշեալ տեղ մը կանգ առնելով, կնճիթի պէս բարակ և փոքր ծծոցնին բողբոջներուն կամ ճիւղերուն կեղեւին մէջ խօթելով, թուփին հիւթը կը ծծեն և անով կ'ապրին: Այս գործողութենէն յոռաջ կուգայ վերջ մը, որ եթէ բողբոջնին վրայ է, հետզհետէ բողբոջնին հետ կը մեծնայ, և երկայն ձեղքի մը տեսքը կ'առնու. իսկ եթէ հասար ճիւղի մը վրայ է, աւելի կ'աչկուի մը ձեւ կ'առնէ: Եւ ձեր թուփերուն վրայ երեւցած վէրքերն ալ առնք են:

Այս որդերէն ոմանք արու, իսկ ուրիշները էդ կ'ըլլան: Սրունները տեսակ մը փռչիի պէս նիւթ մը կ'արտադրեն, որու մէջ ծածկուելով կ'այլակերպին, և վեր ի վերայ, իրենց ծնած օրէն 6 շաբաթ ետքը՝ ինչպէս վերը ըսինք, ձանձի մը պէս թեւաւորուած, դուրս կ'ելլան և կը թռչտին: Եթէ ուշադրութեամբ դիտէք, ձեր վարդի թուփերու ճիւղերուն վրայ պիտի նշմարէք տակաւին, տեղ տեղ, և մասնաւորապէս երկայն և քիչ մը լայն ձեղքերուն մէջ, այդ փռչիի պէս նիւթը, որ այժմ կ'ալքացած է թէեւ, բայց ստվէնիկով (փէրտաֆորը) մը դիւրաւ կը զանազանուի:

Եթէ տարւոյն եղանակի բարեխառնութիւնը նպաստաւոր ըլլայ, ինչ որ տեղի կ'ունենայ ընդհանրապէս տաք երկիրներու մէջ, այն աստիճան կը շատնան որ, ամբողջ թուփի ճիւղերուն վրայ հաղարներով տարածուելով, ճիւղերը կոշկոռներով կը լցունեն: Եւ ինչպէս վերը ըսինք, այս միջոտին ամբողջ

կեանքը գրեթէ 6 շաբաթ կը տեւէ. և սարուան մէջ մէկ քանի անգամներ սերնդաւորելով, կրնաք երեւակայել թէ, որ աստիճան կրնան շատնալ: Վերջին հաւկիթները կը մնան ճիւղերուն վրայ, և սաւանց ցարտէն մըստուելու, կ'անցնեն հոն ձմեռը, և երբ գարնան մէջ օդերը տաքնան, կը ճաթին, և որդերը դուրս կ'ելլեն:

Այս փնտաւար միջոտին առաջը տունելու համար թէեւ շատ միջոցներ յանձնարուած են, բայց հետեւեալ եզրահակ ամենէն դիւրին, խնայողական և յաջողն է:

Մէկ քաջ ջուրի մէջ խաշեցէք մէկ սրտով դառնահամ կասիս (աճը աղած). առէք կարծր խողանակ մը, զոր օրինակ՝ տախտակ չիւղու խողանակ մը. թաթխեցէք այդ ջուրին մէջ, և անով աղէկ մը չիւղեցէք ստերը, յետոյ լաթ մը թաթխելով այդ ջուրին մէջ, կլերէն վար լաւ մը լուացէք, և թողուցէք այսպէս ձմեռը: Եթէ բողբոջներէն (Ֆիլիզ) շատ փնտաւածներ կան. կտրել նետելու է, կամ աւելի աղէկը, այրելու է: Ապրիլի առաջին օրերը պէտք է կրկին այս ջուրով լուալ, ինչպէս ըսինք՝ լաթով մը: Ոմանք այս վերջի անգամուն, կասիսին հետ ծխախոտ ալ կը խառնեն, որ լաւ ազդեցութիւն կ'ընէ: Այս մասունք մէջ երբ կը տեսնէք թէ՛ կրկին սկսած են տարածուիլ սողաբուտները, դարմանը վերսկսելու է. բայց այս անգամ ձարձատիջով մը, կամ եթէ չունիք, ցախաւելով մը առատօրէն սրսկելու է վարդի թուփերուն վրայ: Եթէ ծխախոտ ալ դնէք, մէկ քաջ ջուրին 5 տրամի չափ կը բաւէ:

Լ. ԲՈԼՍ

ԳԵՏՆԱԽՆՁՈՐԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆՆԸ

(Շարունակութիւն ԳԵՏՆԱԿԻ 30)

Այս տեսակը յառաջ բերած է մշակութեամբ 1846ին Մ. Շառտոն անուն հոլադէկտ երկրագործ մը: Շատ ուշ կը հասնի թէեւ, բայց խիստ բազմաբեղուն է, և հիւանդութիւններէն ալ քիչ կը վախնայ:

7. ՄԱՆԵՑՈՒ ՊՕՆՈՒՄ. — Երկայն հաւկթաձեւ, կանոնաւոր, մէջքը կտր, իսկ ծայրերը քիչ մը տափակցած: Զօրաւոր և բազմաշատ ցօղուններ ունի. կեղեւը դեղին և

թեթեւ կերպով վարդազոյն. քիչ աչք ունի, որոնք խոռոչներու մէջ թաղուած չեն միւս տեսակներուն պէս. միւսը դեղին, սեղմ և տխրատ, ծաղիկը եղբւանէզոյն: Խիստ բազմաբերուն և մառաններու մէջ երկար առանց պահուող սքանչելի տեսակ մ'է:

8. ՎԱՆ ՏԷՌՒ ՎԷՌ. — Խոշոր, երկայնաձեւ և կլոր: Կեղեւը դեղին, խիւսիսը ճերմակ. բողբոջները վարդազոյն, ծաղիկները ճերմակ, կամրահատ տեսակ մ'է, բայց բոլոր մշակուած գետնախնձորներուն մէջ, ամենէն աւելի բարձրագոյնն է, և փեկուղի (նշաւթա) արտադրութեան համար ալ յարմար տեսակ մ'է:

9. ՇԱՄԲԻՍՆ ՏԷԳՈՍ. — Կլոր, բայց անկանոն՝ ձեւով և խոշորութեամբ, կեղեւը և միւսը դեղին, խիստ փեկուղւտ. ծաղիկները եղբւանէզոյն: Ուշ կը հասնի, բայց շատ կ'արտադրէ:

10. ՖԱՌՆԷՕԶ ՌՈՒԺ ԿԱՄ ՊՈՒՎ ՏԸ ՖԱՌՆ. — Ելունդները խոշոր, կլոր, կեղեւը կարմրագոյն, միւսը ճերմակ, բայց թեթեւօրէն դեղինի վրայ, ծաղիկները մանիչակագոյն, բողբոջները կարմիր:

Այս տեսակը ուշ կը հասնի, բայց ասէկ կը գիմանայ. փեկուղի գործարանները կը փնտռեն, շատ փեկուղ արտադրելուն, ինչպէս իր անունէն ալ կը հասկցուի:

11. ԲԱՌՌԱԲ ՊԼԱՆՇ ԿԱՄ ԷՔՈՒ ՆՕՊԼ. — Ելունդները շատ խոշոր կ'ըլլան, ուռուռիկ, անկանոն ձեւերով, կեղեւը ճերմակ, բողբոջները և ծաղիկը վարդազոյն:

Այս վերջին տեսակը հիմա շատ չեն մշակեր. որովհետեւ շատ ուշ կը հասնի, և արմատները շատ կը տարածուին հողին տակ:

* * *

ՊԱՐՏԷԶՆԵՐՈՒ ՆԻ ՊԶՏԻԿ ՄՇԱԿՈՒԹԵԱՆՑ ՅԱՐՄԱՐ ՏԵՍԱԿՆԵՐ

1. ԲԻՏՆԷՅ ԺՕՆ ԿԱՄ ՄԱՌԺՕԼԷՆ. — Երկայն, քիչ մը հաւկթածեւ, փորը ներս մըլած, կռնակը ուռած, վերի կողմը խոշորիկէ և գլխէն քիչ մը տափակցած, կեղեւը դեղին և ոլորի, աչքերը մանր, և Դնի չափ, միւսը ճերմակ դեղնագոյն, նայնոյէս և բողբոջները, տերեւները ուռուցիկ, ոլորի և կռնաչ, գլխիկէ ծաղիկ չ'ունենար:

Աքանջելի տեսակ մ'է, և շատ կանուխ կը հասնի. զոր եւ քառանթէն (քառասնեակ) ալ կը կոչեն:

2. ԹՈՒԻԺ ՏՈՒ ԿԱՄ ՌՈՒԺ ՌՕՆՏ. — Ելունդները կլոր և անկանոն, կեղեւը թուխ կարմիր, խորտաբոյլ կամ ճեղքատած, միւսը ճերմակ կանաչաթոյր, բողբոջները վարդազոյն մանիչակագոյնի վրայ, աչքերը շատ խորունկ, տերեւները սրածայր, վնասուած, եղբրքնին վար դարցած, ծաղիկները ճերմակ:

Խիստ ընտիր տեսակ մ'է, կը հասունանայ մինչեւ օգոստոսի 15—20:

3. ՎԻԹԼԻՍԹ. — Ելունդները երկայնաձեւ, տափակ, կեղեւը բաց վարդազոյն, միւսը ճերմակ և սիւնդ, աչքերը շատ խորունկ և երկայն ճեղքած, բողբոջները դեղին մանիչակագոյն, ծաղիկները խոշոր և ճերմակ, ցողունները թուխ կարմրագոյն:

Այս տեսակը վերինէն աւելի շատ կը հասնի, և խիստ յարգի է, եփուած առանց ելունդները չեն տարածուիր:

4. ԺՕՆ ԼՕՆԿ ՏԸ ՀՈՒԱՆՏ ԿԱՄ ԳՕՌՆԻ-ՇՕՆ ԺՕՆ. — Ելունդները տափակ, երկայնաձեւ, մէկ ծայրերին բարակ, կեղեւը դեղին և ոլորի, միւսը դեղնագոյն, նրբահամ և ալիւրոտ, աչքերը քիչ մը դուրս ցցուած և 100ի չափ, բողբոջները ճերմակ եղբւանէզոյն, ծաղիկները մանիչակագոյնով խառն եղբւանէզոյն և վայրահակ:

Այս տեսակն ալ խիստ յարգի է և կը փնտռուի բարձր խոհանոցներու համար, մանաւանդ որ երկարատեւ ալ կը գիմանայ:

Բարիքի չըջակները գտնուող պարտիզպանները ասոր ուրիշ մէկ տեսակը կը մշակեն ընդհանրապէս, որ կը կոչուի «Բօմ-տըթէն քառանթէն տը լա հալ», դեղին և կիսով չափ երկայն ելունդներով:

5. ՎԻՕԼԷԹ. — Կլոր, բաւական կանուսը ձեւերով, աչքերը երեսկուք, կեղեւը սեւ մանիչակագոյն, միւսը դեղին, բողբոջները և ծաղիկները մանիչակագոյն: Միջակ յամրահատ, յաւիտի սկիզբները կը հասունանայ, բազմաբերուն և ընտիր տեսակ:

Ատոնցմէ զատ թէեւ խիստ շատ տեսակներ կան, և հետզհետէ ալ Եւրոպայի բաւաճ կը բերեն նոր նոր տեսակներ, բայց մենք միմիայն գլխաւորներուն վրայ խօսելով, լոկ գաղափար տալ ուղեցինք:

ԳԵՏՆԱԽՆՁՈՐԸ ԲԱԶՄԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ. — Գետնախնձորը բազմացնելու համար, չորս տարբեր եղանակներ կը գործածուին. 1.

Հունտերը ցանկերով. 2. Միմայն աչքերը փո-
րելով և տնկելով. 3. Տաշտաթաղով և 4. Ե-
լունդները տնկելով:

ՍԵՐՄԱՆՈՒՄ. — Գետնախնձորը գիւրու-
թեամբ կը բազմանայ սերմանումով, բայց ո-
րովհետեւ այս միջոցով կարելի եղած չէ ցարդ,
բուն ելունդները տնկելով, արտադրուած
գետնախնձորներուն պէս գետնախնձորներ
առաջ բերել, մշակութեան համար այս մի-
ջոցը չեն գործածեր: Շատ հին ժամանակ-
ներէ ի վեր, գետնախնձորներուն հիւանդու-
թեան առաջըր առնելու համար, հողագէտ-
ներ ջանացած են սերմանումով նոր տեսակ-
ներ առաջ բերել, յուսալով որ այդ նոր տե-
սակները կրնան դիմադրել հիւանդութեանց,
բայց աւելի գետնախնձորի տեսակները շատ-
ցուցին, քան թէ հիւանդութեան առաջըր
առին: Նոյնպէս՝ այս սերմանումի միջոցով
յաջողեցան գոնէ, ամէն հողի և կլիմայի յար-
մար, գետնախնձորի ընտիր տեսակներ յա-
ռաջ բերել, և այս միջոցին ալ գլխաւոր ա-
ռաւելութիւնը ատոր վրայ կը կայանայ:

Որովհետեւ մեր երկրին մէջ շատ տեղեր
սկսած են արդէն գետնախնձորի մշակութիւ-
նով դրաղիլ, սերմանումով նոր տեսակներ
յառաջ բերելու միջոցին վրայ մանրամասն բա-
յատրութիւններ տալ օգտակար կը սեպենք:
որպէս զի՝ ի պահանջել հարկին, իրենց հո-
ղին և կլիմային յարմար նոր և ընտիր տե-
սակներ յառաջ բերել փափաքողները օգ-
տուին:

(Շարժանք)

Ղ. ԲՈՒԱՏ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

ՍԵՐԿԵԻԻԼԸ

Այս պտուղը կազդուրիչ և պարմիչ է (ա-
ղիքները անդաշնող) կ'ըսէ Տօք. Տիւրաքիէ,
և կը յաւելու թէ՝ ժողովրդական դարման
մ'է թեթեւ աղեպնդութեանց համար:

Ահաւասիկ մէկ քանի պատրաստութեանց
տեսակներ, որոնցմէ պէտք է ամէն տուն
գտնուի:

Սերկեւիլները շերտ շերտ կտրեցէք և չոր-
ցուցէք, երբ պէտք ունենաք, ջուրը եռա-
ցուցէք և մէջը նետեցէք քանի մը կտոր,

ուրիշ՝ անորժաւհամ բուսածուր մը կը պատ-
րաստուի, թեթեւաղէս պարմիչ, որ աղիք-
ներու տկարութենէն յառաջ եկող աղիքու-
ծութիւնը կը դադարեցնէ, առանց տենդի կամ
խտտուելի: Սերկեւիլի դոնդողը և «չուռու-
ոլ»ը միեւնոյն յատկութիւնը ունին:

Իւր կուտերը շատ հուզային ըլլալով ե-
թէ ջուրի մէջ եռացնէք կակղացուցիչ և մեղ-
միչ բուսածուր մը կ'ունենաք, թեթեւ կրճա-
տապերու, ինչպէս և հազի համար:

Նոյնպէս իւր կուտերը կրնաք գործածել,
կարգ մը աչքի հիւանդութեանց, և վէրքե-
րու կամ ձեղքաւորքներու բորբոքումը մեղ-
մացնելու համար: Պատրաստեցէք հետեւեալ
էրարով, 2—3 պտուղնց սերկեւիլի կուտ ա-
ռէք, և կէս շիշ պաղ ջուրի մէջ լեցուցէք,
թողուցէք այսպէս 1—2 օր, երբեմն շիշը
ցնցեցէք և գործածեցէք:

* * *

ՍԵՐԿԵԻԻԼԻ ԿՏԱՊ (ԲՕՄԲՈՍՏՕ)

Լաւ հասունցած 5—6 հատ սերկեւիլ ա-
ռէք, մասերու բաժնեցէք, միջուկը հանե-
ցէք: Սանի մը մէջ քիչ մը ջուր լեցուցէք,
կրակին վրայ դրէք, և երբ ջուրը եռայ, սեր-
կեւիլները մէջը նետեցէք որ ձերմիլին, թո-
ղուցէք այսպէս 5 վայրկեան, և սառնը կրա-
կին վրայէն վար առէք: Ծաղտոկէն շերտիով
մը առէք սերկեւիլները, և պաղ ջուրով լեցուն
ամանի մը մէջ դրէք, թողուցէք որ աղէկ մը
մը պաղին, յետոյ կրկին ծակոտկէն շերտիով
հանեցէք և քամոցի մը վրայ չարեցէք. և երբ
ցամքին, կեղեւները չզուլութեամբ հանե-
ցէք: 80 տրամ շաքար դրէք պղտիկ տապակի
մը մէջ, և աւելցուցէք վրան մէկ քառորդ
լիթրա ջուր (80 տրամի չափ), և լիմանի մը
հիւթը: Դրէք տապակը կրակին վրայ, և երբ
չաքարը հալի, սերկեւիլները մէջը նետեցէք,
(կրակը չափաւոր ըլլալու է), թողուցէք որ
քիթքիթայ: Երբ սերկեւիլները եփին, ծակոտ-
կէն շերտիով մը մէջէն առէք ու պնակներու
մէջ չարեցէք. մնացած ջուրը քիչ մը թանձ-
րացուցէք, և սերկեւիլներուն վրայ լեցուցէք,
աղէկ մը պաղեւէն վերջը հրամցուցէք:

* * *

ՍԵՐԿԵԻԻԼԻ ԴՈՆԴՈՂ (ԲԵԼԹԷ)

Մէկ քիւ շաքարի համար կէս քիւ սեր-
կեւիլ առնելով վրայի աղուամազերը լաթով

մը սրբեցէք, և միջուկը հանեցէք: Իսկոյն պաղ ջուրի մէջ նետեցէք որ չի դեղնին: Զուրէն հանելով ցամքեցուցէք, և սանի մը մէջ դնելով՝ աւելցուցէք 2 ուկէս լիթրոս ջուր: Կրակին վրայ դրէք և շերտիով խառնեցէք երբեմն, մինչեւ որ խիւսանոյշի (էգմէ) վերածուի: Քամոցը մեծ սանի մը վրայ դնելով՝ դոնդողը մէջը լեցուցէք, և թողուցէք որ ինքնին թորթորի (սառնոց խառնելու): Եւ այդ հիւսիսի վրայ աւելցուցէք 1 քիւր փոշխացած չաքար, և այնքան թանձրացուցէք, որ պղեւն վերջը, դոնդողի դառնայ: Պէտք է կէս պաղած լեցնել բոլոր զներու մէջ, և վերջացունել հետեւեալ կերպով, (Տե՛ս Հան. Թիւ 1):

* * *

ՍԵՐԿԵԻԼԻ ԲԱՍՏԵՂ

Առէք 2 քաշ սերկեւիլ, չոր լաթով մը սըրբեցէք, և քերոցէ անցուցէք ու պարզուտի (սիւզկէճ) մէջ լեցուցէք: Առէք այժմ 1 օխտ 300 տրամ փոշխացած չաքար, սերկեւիլին հետ խառնեցէք ու եփեցէք, (սակայն միշտ ծակոտէն շերտիով մը խառնելու է որ առկը չ'առնէ): Եւ երբ սերկեւիլը թափանցիկ դոյն մ'առանայ, ախտի մը մէջ առաջուց ցանեցէք փոշխացած և բարակ պարզուտէ անցած չաքար, ու յետոյ սերկեւիլը վրան լեցնելով՝ դրդալով մը երեսը յարդարեցէք: Կրկին փոշխացած չաքար ցանեցէք, և փուռի մէջ (հացը եփելէն 6 ժամ վերջը) չորցուցէք: Երբ դուրս հանէք, մասերու բաժնեցէք, և դրէք բոլորներու մէջ, բերանը դոց պահեցէք:

ԱՐԱՔՍ

ՍԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բրոք. Անդրէաս Արծրունի մեռեր է ի Գերմանիա. հանգուցեալը Գերման համալսարաններէ ուսուցչապետի աստիճան առած էր: Հանքարանութեան վրայ հեղինակութիւններ ունի ու դատախօս էր այդ ճիւղին: Ծանօթ հրապարակագիր Գր. Արծրունիի եղբայրն էր, և լուրջ ու գիտուն անձ մըն էր:

— Պոլսոյ թաղային վարժարաններու շրջանաւարտներէն անոնք որ Քննիչ Յանձնաժողովին ներկայանալով վկայականի արժանի դատուեցան առաջիկայ հոկտ. 18ին իրենց վկայականը պիտի առնեն: Ասոնց թիւն է 39:

— Կաւկասեան Հայ վարժարանները թըւով 250 բարձր. հրամանով վերաբացուեցան. պայմանով որ ուսուցիչները կառավարական դպրոցէ մը վկայական ունենան իրենց ձեռքը: Դատախօսութիւնները հայերէն լեզուով պիտի ըլլան:

— Ս. Պատրիարք Հայրը անցած չարթու Կոյս. Պալատ երթալով Ա. Քարտուղար Թահսին պէյի հետ տեսակցեցաւ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլ. նորընտիր դեսպան Սըր Նիքոլաս Օքոնրը պաշտօնապէս Վեհ. Սուլթանին ներկայանալով իր յանձնարարագրերը մատուց: Յետոյ այցելութիւն առաւ Մեծ-Եպարքոսին և Արտաքին գործերու նախարարին:

— Եգիպտոսի Ստիվին եղբայր՝ Մէհմէտ Ալի փաշայի ականակուռ Օսմանիյէ պատուանշան արուեցաւ:

— Ամերիկեան նորընտիր դեսպան Պ. Սթրատուս իր յանձնարարագրերուն պատճէնները Մեծ-Եպարքոսին մատուց: Կ'ըսուի թէ Պ. Սթրատուս Կոյս. Կառավարութեան պիտի առաջարկէ Առաջին կարգի դեսպանութեան վերածել Ամերիկեան դեսպանութիւնը:

— Հանրօգուտ Շինութիւններու նախարարութիւնը՝ Թուրքիոյ մէջ ելեկտրաշարժ թրամուէյներ բանեցնելու խնդիրը ուսումնասիրով, տեղեկագիր մը պատրաստեց, որուն մէջ ի վեր հանուած է այդ դրութեան առաւելութիւնները:

— 500.0 ոսկի գումար մը պիտի յատկացուի Թուրքիոյ բաժինը փայլուն կերպով ցուցադրելու Ֆրանսական 1900ի արուեստահանդէսին մէջ:

— Որոշուած է երկու հարիւր հազար ոսկիի արժէքով մանր դրամ կրօնել, 5, 10, և 20 փարանոց: Բայց կը մտածուի ոլլինձի և արծաթի խառնուրդին տեղ, Եւրոպայի մէջ գործածուած ձերմակ մետաղով պատրաստել:

— Ծովային նախարարութիւնը՝ Գարուսթայի ի մօտոյ կառուցանելի կամուրջին համար շինուածանիւթեր ապագրած է Եւրոպա:

— Կոյս. հրաման մը կ'արտօնէ Անատոլի երկաթուղիներու ընկերութիւնը՝ Ատա-

բազմաթիվ կայարաններ մինչև համանուն քաղաքը երկաթուղիի ձևով մը չինել։ Շինութեան պայմանները ստորագրուեցան Հանրագումար Շինութիւններու Նախարարութեան պաշտօնատան մէջ։

— Յորենի գինը սկսած է բարձրանալ եւրոպական հրապարակներու վրայ։

— Աֆիօն-Գարա-Հիտարի մէջ երկու անգամ երկրաշարժի բռնուն ցնցոյ մներ զգացուեր են. մնաց չկայ։

— Գոսովայի կուսակալը և Անատոլի նահանգներուն ընդհանուր քննիչ Շաքիր փաշա՝ յիշատակագրեր մատուցած էին Մեծ-Ենպարքոսութեան, ուր ժողովրդեան բարօրութեան համար միջոցներ առաջարկած էին. Մեծ-Ենպարքոսութիւնը ձեռնհաս պաշտօնատուներուն յանձնեց թղթերը։ Հիմա ամէն նահանգի վիճակագրութիւնը կը պատրաստուի, որպէս զի աւելի զիւրանայ առաջարկուածներուն գործադրութիւնը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԻԱՑՅԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐ ԵՒ ՍՊԱՆԻԱ. — Բարիդի հաշտութեան Յանձնաժողովին Ամերիկեան պատուիրակներուն հրամայուած է իրել յարաբերութիւնները՝ եթէ Սպանիա դժուարութիւններ յարուցանէ։ Քուպայի Սպանիական իշխանութիւնները դժուարութիւններ կը հանեն կղզին պարպելու։ Ամերիկեան կառավարութիւնը Քուպայի Սպանիական իշխանութեանց ծանուց թէ՝ կղզին մինչև դեկտ. 1 պէտք է պարպուի ու իշխանութիւնը Ամերիկացիներուն անցնի։ Յըրանքեւ Պելճիական դրամատէրներու խմբակ մը ձեռնարկած է 1000 միլիոն բէշէթա փոխառութիւն ընել Սպանիայի։

— Վճարեկ ատենը իր հաւանութիւնը տուաւ Տրէյֆիլսի խնդրին վերադառնալ մասին։ Ատենը Պ. Պաուլ յանձնեց թուղթերը որպէս զի քննէ ու տեղեկագրէ։ Զրոյց մը չըլեցաւ թէ՝ Տրէյֆիլս կառավարութեան կողմէ Բարիդ պիտի բերուի։ Գնդապետ Բիքսոն տակաւին բանադրուած է, ոչ ոք կրնայ տեսնել զանի, և ոչ իսկ իր փառասրանը։ 10000 զօրք տկնջուած է Բարիդ, որպէս զի

նախկինութեան օգնէ հանր. անդորրութիւնը վերահաստատելու համար, որ վերջերս վրդովուած էր Տրէյֆիլսի խնդրին պատճառաւ։

— Հանգուցեալ Նախագահ Պ. Քառնոյի կինը մեռաւ։

ՉԻՆԱՍՏԱՆ. — Եւրոպական տէրութիւնները միաձայնութեամբ պահանջած են Չինական կառավարութեան ընդհուպ դադրեցնել Չինացիներու յարձակումները օտարագրներուն վրայ։ Չինական կառավարութիւնը խոստացաւ դադրեցնել։ Ռուս. Անգլ. Ամեր. և Գերմ. մարտանաւերը Բէքինի գետափերը կը դառնուին, որոնք պէտք եղած տուն զօրք պիտի հանեն ցամաքը իրենց հպատակները պաշտպանելու համար։ Լոնտոնի Չինական դեսպանը գեկոյց մը հրատարակեց թէ Բէքինի խաղաղութիւնը չէ վրդովուած, և թէ Չինու կայսրն ու կայսրուհին լաւ յարաբերութեան մէջ են իրարու հետ։



ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ


Ժէ.

ՀՈՉԱԿԱՆՈՐ 45 ԹԻԻԸ

Հռչակաւոր է, որովհետեւ քառասուն և հինգէն 45 հանցի, և զարձեալ 45 միայ։

— Հէ՛, ի՞նչ կ'ըսէք, կարելի բան է։

— Այո՛, կարելի է, եթէ հնարը գտնէք։



ԼՈՒՄՈՒՄԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ

ԺԲ. Խնդիրն՝ որով կ'առաջարկուէր փառապան յառաջատուութեան մը երեք եղբերը գտնել։

Լուծեր է,

Հմայեալ Մ. Շիլմանեան էֆ. ի Ֆիլիպէ։

Պատասխան 8:24:96:



ՎՐԻՊԱԿ

ԺԱ. Խնդիրն՝ պատասխանն լինելու է 0,0658 մէթր կամ 65,8 միլիմէթր։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլսոյ եւ Գալաթիոյ համար

Հանրագիտակ տարեկան	50 դր.
» Վայելչազարդութեան բաժինով	80 »
Հանրագիտակ միայն Վայելչազարդութեան բաժին	60 »
Հանրագիտակ Վայելչազարդութեան բաժին դռնաւոր եւ մեծադիր 36 պատկերներով	110 »

Արճաւանմանի համար

Հանրագիտակ տարեկան	15 փր.
» Վայելչազարդութեան բաժինով	20 »
Հանրագիտակ միայն Վայելչազարդութեան բաժին	16 »
Հանրագիտակ Վայելչազարդութեան բաժին դռնաւոր եւ մեծադիր 36 պատկերներով	25 »

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՐ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ ՎԱՅՆԼՁԱԶԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԻՆ

Դ. ԲՈՂԱՏ

Խոնքազարակէ Հանրագիտակ Հանդեսի

թիւ 19 էսկի-Ջապիէ

Կ. Պոլիս

Տէր.

Գնահատելով Ձեր հանրօգուտ ձեռնարկը, հաճեցէ՛ք զիս բաժանորդ արձանագրել թերթիդ վայելչազարդութեան բաժինն

Ստորագրեալ
(Բնութեան)

1898

Բնակութեան տեղ

Հասցէ

Փորձառու վարժուհի մը կը փափարէի Հայ. Յորման. Ձեռագործի եւ Ձեռագիտութեան դասեր տալ տուներու կամ վարժարաններու մէջ, զոհացուցիչ պայմաններով:

Պէտք ունեցողները կրնան զիմեւ խորհրդակցութեան:



ՀԱՃՈՅՔ ՄԸ

ՈՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԿՐ ՊԱՏՃԱՌԷ

Ճշմարիտ հաճոյքն այն է որ, ախորժելի ժամանց մը ընծայելով հանդերձ, առողջութեան ալ մեծապէս կ'օգնէ: Ներկայ դարուս մէջ հաճոյքի նիւթերը բազմաթիւ են. սակայն զարդացած ազգեր ամենէն աւելի թիջին նախադասութիւնն կուտան, անոր համար որ, այս թանկագին ըմպելին ամենաժամանակաւորութիւնները չուտով կ'անցնէ եւ նոր կորով կը ներշնչէ, մարդուս ձգած աշխատութիւնը վերսկսելու: Զմեւը արիւնը տաքցնելով, մարմինը ցուրտին դէմ կը պաշտպանէ՝ ամառն ալ զովութիւն ընծայելով, շատ մը հիւանդութեանց առաջը կ'առնէ: Խնամով պարտաւորաբար դաւաթ մը թէյը, նոյնչափ մօր ջուրի հաւասար անունդ կը պարունակէ եւ իր անբաղդատելի աժնութեամբ կատարեալ նախախնամութիւն մըն է մարդկութեան համար: Սակայն աւագ որ թիջ անուամբ ծախուած ներու մեծազոյն մասը խարդախուած ըլլալով, զուրկ են այս առաւելութիւններէն եւ զանոնք ճանչնալն շատ դժուար է, ուստի անոնք որ կը փափարին ԸՆՏԻՐ, ԱՆԽԱՐԴԱՆ եւ միւսնոյն ատեն ԱԺԱՆ թէյ խմել, պէտք է Կ. ԵՍՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿԵՐՑ թէյերը զորոժանեն. ուշադրութեամբ փնտռելով անոնց անունն ու մասնաճիւղը տուփերու վրայ: Որովհետեւ թէյի այս մեծ վաճառատուն, իւր երկարամեայ փորձառութեամբ, արեւելեան երկիրներէ մեծաքանակ թէյ արտածելուն եւ ահագին ասպանքներ սպառելուն ջնդակ, միշտ անխարդախ թէյ կը ծախէ ԱՆՄՐՑՆԷԼԻ գիներով: Ընկերութեան Կեդրոնատեղին է Կ. Պոլիս, ձեւով Պէյ խոտն, թիւ 10:

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Կը խնդրուի թերթիս հետ առնչութիւն ունեցող ամեն անձերէ (գործակալ, բաժանորդ, ևն.) որ բարեհաճին իրենց թղթակցութիւնները ուղղել հետեւեալ հասցէին, ԱՌԱՅ ՌԻՐԻՇ ՈՒԵԼԻ Է ՄԻԶՆՈՐԴԻ. հակառակ պարագային, եթէ անպատեհութիւններ տեղի ունենան, ամեն գանգատ անլսելի մնալով, պատասխանատու չենք ըլլար:

در علی‌دهه باغچه قیوسنده اسکی ضبطیه ده
صوبای پارسغ افدینک ۱۹ نومرولی دکانشده
«مجموعه علوم» غزیه سی سرحرری (بولاد) افدی به

Ղ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Գափու
Սթամպուլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK,"
Chez M. Parsegh Hazarossian
19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul

ՄԵՍ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. ՊՈԼԻՍ ՖԵՏԻԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻ 3

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամեն տեսակ թարմ դեղորայք. վիրաբուժական գործիքներ, Անգղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, զօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ վթերք մը, յարմար գներով: Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն զահացրելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք զաւառացի համար, որոնց կը ջրկեն դեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

ԳՈՐԾԱԿԱԼԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

Այնթապ — Դարեգին էֆ. Պողարեան
Ասա-բազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
Արաբկիր — Գ. Տէվէճեան էֆ.
Էրզրում — Եղ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բարարեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճանեան
Իզմիս — Աբրահամ էֆ. Կ. Կտաւճեան
Մալկարա — Վ. Մանուկ էֆ. Չօլաքեան
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէշիշեան
Թրեպոնի — Գալուստ էֆ. Գըլլճեան
Սինոպ — Յ. էֆ. Պետրոսեան

Կիրասուն. — Արմենակ էֆ. Սօմունճեան
Մարաշ — Արթ. Տ. Յովհաննէս քահանայ
Վարժապետեան
Մանչեսթր. — Յակոբ էֆ. Բոլատեան
Պանսքումա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Սրվազ. — Յ. էֆ. Գարակէօզեան
Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէքճեան
Կիլիպօլու — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Մանիսա. — Մկրտիչ էֆ. Էրկանեան
Աֆիոն-Գաւա-Հիսար. — Արտաշէս էֆ. Հալսլեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառացի քով, մասնաւորաբար

Մազրի-Դիւզ, Պօղոս էֆ. Աղնաւորեանի խանութը,
Գաւա-Դիւզ, Լեւոն էֆ. Չպուքճեան Դեղարանը,
Բհրա, Մեծ փողոց Դառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: